ԱՄՆ-ի Արդարադատության Վարչություն
Հետաքննությունների Դաշնային Բյուրո

# ՍՊԱՌՆԱԼԻՔ և ԱՀԱԲԵԿՈՒՄ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## ԱՆՁՆԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

**Ֆիզիկական ԱՆՁՆԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆ այն է, երբ դուք սպառնացող անձի մոտակայքում գտնվելու պատճառով հայտնվել եք անմիջական վտանգի տակ: Դուք ունեք երեք տարբերակ:**

1. **Փախչել:** Որոշեք փախուստի որևէ ճանապարհ: Հրաժարվեք այն իրերից, որոնք կարող են դանդաղեցնել ձեր տեղաշարժը: Հնարավորության դեպքում օգնեք ուրիշներին փախչել: Զանգահարեք 911:
2. **Թաքնվել:** Թաքնվեք սպառնալիքի տեսադաշտից: Կողպեք դռները կամ արգելափակեք մուտքերը: Լռեցրեք ձեր բջջային հեռախոսը (ներառյալ վիբրացիոն ռեժիմը) և մնացեք լուռ մինչև սպառնալիքն ավարտվի:
3. **Կռվել:** Կռիվը պետք է լինի վերջին միջոցը և միայն այն դեպքում, երբ ձեր կյանքին անմիջական վտանգ է սպառնում: Փորձեք թուլացնել սպառնալիքի ուժը: Գործեք նույնքան ֆիզիկական ագրեսիվությամբ, որքան հնարավոր է::

**Բանավոր ԱՆՁՆԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆ, այն է, երբ սպառնալիքի մեջ գտնվող անձը չի գտնվում անմիջական վտանգի տակ կամ այն նախատեսվում է իրականացնել ավելի ուշ:**

- Գրեք կամ այլակերպ գրանցեք սպառնալիքը ճիշտ այնպես, ինչպես այն հաղորդվել է:
- Գրանցեք որքան հնարավոր է շատ նկարագրական մանրամասնություններ սպառնալիք հնչեցրած անձի մասին. անունը, արտաքինը, մաշկի գույնը, սեռը, հասակը, քարշը, մազերի և աչքերի գույնը, ձայնը, հագուստը կամ այլ տարբերակիչ առանձնահատկություններ:
- Սպառնալիքի մասին հաղորդեք իրավապահ մարմնին:

## ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

**ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ հեռախոսով ստացված սպառնալիքն է: Դուք պետք է փորձեք հնարավորինս շատ տեղեկություններ ստանալ զանգահարողի և սպառնալիքի մասին, բացառությամբ այն դեպքերից, երբ սպառնալիքն արդեն մոտակայքում է կամ կարող է անհապաղ վնասել ձեզ կամ այլոց:**

- Մնացեք հանգիստ և մի անջատեք հեռախոսը:
- Զանգահարողին հնարավորինս երկար պահեք և փորձեք բավարար տեղեկություններ ստանալ, պարզելու համար, թե արդյոք սպառնալիքը կոնկրետ, իրատեսական բնույթ ունի, կամ անմիջական վտանգ է ներկայացնում ձեզ կամ այլոց համար:
- Հնարավորության դեպքում ազդանշան տվեք մոտակայքում գտնվող մյուս անձանց լսելու և հաղորդելու իրավապահ մարմնին:
- Պատճենեք ցանկացած տեղեկություն հեռախոսի էլեկտրոնային էկրանից:
- Գրեք սպառնալիքի ճշգրիտ ձևակերպումը:
- Հնարավորության դեպքում ձայնագրեք զանգը:
- Ժամանակ ընձեռնեք իրավապահ մարմնի ներկայացուցիչների հետ մանրամասնությունները քննարկելու համար:

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ անմիջական հաղորդագրությունների, էլեկտրոնային փոստի կամ սոցիալական լրատվամիջոցներով ստացած սպառնալիքն է: Այն կարող է ներառել շանտաժի կամ չենթարկվելու դեպքում անբարենպաստ հետևանքներ կրելու սպառնալիքները:**

- Մի բացեք անհայտ ուղարկողների էլեկտրոնային հաղորդագրությունը կամ հավելվածը:
- Մի շփվեք սոցիալական ցանցերում անհայտ կամ անծանոթ անձանց հետ:
- Ապահովեք ձեր անվտանգության կարգավորումների պաշտպանության բարձրագույն մակարդակը:

**Էլեկտրոնային սպառնալիք ստանալու դեպքում:**

- Մի ջնջեք հաղորդագրությունը: Դատաբժշկական փորձաքննությունը կարող է կարևոր մանրամասներ բացահայտել:
- Հաղորդագրությունը թողեք բացված վիճակում համակարգչի էկրանի վրա:
- Անհապաղ հաղորդեք իրավապահ մարմնին:
- Տպեք, լուսանկարեք կամ պատճենեք հաղորդագրությունը, թեման, ամսաթիվը և ժամը:
- Պահպանեք էլեկտրոնային բոլոր ապացույցները:

## ԿԻԲԵՐ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

**ԿԻԲԵՐՀԱՐՁԱԿՈՒՄԸ կարող է վտանգի ենթարկել ձեր էլեկտրոնային սարքը և բացահայտել անձնական տվյալները:**

- Օգտագործեք հզոր գաղտնաբառեր և մի օգտագործեք միևնույն գաղտնաբառը տարբեր կայքերի համար:
- Տեղադրեք անիտի-վիրուսային և անտի-մալվերային ծրագրեր ավտոմատ թարմացմամբ:
- Կիրառեք համակարգի և ծրագրային ապահովման թարմացումները դրանց առկայության դեպքում:
- Կիրառելք երկֆակտորային հավաստիացում:
- Կանոնավոր կերրպով հիշապահպանեք տվյալները:

**Եթե կասկածում եք, որ դուք դարձել եք կիբերհարձակման զոհ ապա.**

- Մի ջնջեք կամ մի փոխեք ձեր կոմպյուտերային համակարգերը:
- Անմիջապես կապվեք ձեր ֆինանսական հաստատությունների հետ, ձեր հաշիվները ինքնության գողությունից պաշտպանելու համար:
- Փոխեք գաղտնաբառերը և վերահսկեք ձեր հաշիվները հավանական կասկածելի գործունեության համար:

***Եթե դուք անմիջական ֆիզիկական վտանգի մեջ եք, զանգահարեք 911:***

*Եթե դուք վտանգ եք զգում, խնդրում ենք կապվել ձեր տեղական ՀԴԲ-ի տարածքային գրասենյակի հետ (ցանկը կարող եք տեսնել՝ www.fbi.gov)*

*Կամ ներկայացրեք հուշում 1-800-CALLFBI միջոցով (կամ 1-800-225-5324) կամ www.fbi.gov/tips միջոցով:*

***Կարող եք նաև անանուն տեղեկություն հաղորդել ՀԴԲ-ին՝ հեռախոսով կամ առցանց:***

ԱՄՆ-ի Արդարադատության Վարչություն
Հետաքննությունների Դաշնային Բյուրո

# ՍՊԱՌՆԱԼԻՔ և ԱՀԱԲԵԿՈՒՄ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Եթե ինձ սպառնում կամ ահաբեկում են, ապա ո՞ւմ պետք է դիմեմ՝ տեղական ոստիկանությանը, թե՞ ՀԴԲ-ին

- Եթե դուք կամ այլ անձինք գտնվում եք անմիջական ֆիզիկական վտանգի մեջ, զանգահարեք տեղական ոստիկանություն հավաքելով՝ 911 հեռախոսահամարը:
- Եթե դուք գտնվում եք դաշնային հանցագործությանն առնչվող որևէ սպառնալիքի մեջ, ապա դիմեք ձեր տեղական ՖԴԲ-ի դաշտային գրասենյակ (ցանկը ներկայացված է www.fbi.gov – ում), զանգահարելով 1-800-CALLFBI (կամ 1-800-225-5324) հեռախոսահամարին կամ www.fbi.gov/tips միջոցով: Օրինակները ներառում են օտարերկրյա կառավարության գործակալի, կազմակերպված հանցագործության կամ պետական պաշտոնյայի կողմից կատարված սպառնալիքները: Ձեր կողմից արվող հաղորդումը կարող է լինել անանուն:
- Ոչ բոլոր միջադեպերն են համապատասխանում ՀԴԲ-ի հետաքննության շեմին: Եթե դուք միջադեպի զոհ եք դարձել, որը չի համապատասխանում դաշնային հանցագործության շեմին, հնարավոր է, որ անհրաժեշտ լինել այդ մասին հաղորդել ձեր տեղական ոստիկանության բաժնին: Տեղական և նահանգային իրավասություններն ունեն հանցագործության կասկածելի դեպքերի հետաքննության տարբեր շեմեր:

## Ի՞նչ կարող եմ ակնկալել, երբ ինձանից հարցազրույց է վերցնում ՀԴԲ-ն:

- ՀԴԲ-ի գործակալը կարող է հանդիպել ձեզ հետ ՀԴԲ-ի տեղական գրասենյակում կամ մեկ այլ վայրում:
- ՀԴՊ-ն ձեզանից խնդրելու է տրամադրել հնարավորինս շատ մանրամասն տեղեկություններ հանցագործի և ձեր նկատմամբ կատարված սպառնալիքի վերաբերյալ:
- ՀԴԲ-ն ձեզանից խնդրելու է տրամադրել ձեր հաղորդակցման տվյալները՝ անհրաժեշտության դեպքում ձեզ հետ կապ հաստատելու համար:
- ՀԴԲ-ն փորձելու է պաշտպանել ձեր անձի ինքնությունը և գաղտնիությունը:
- Անհրաժեշտ դեպքերում, ՀԴԲ-ի Զոհերի հարցերով մասնագետը կարող է ներկա գտնվել հարցազրույցի ժամանակ՝ տեղեկատվություն և աջակցություն ապահովելու համար, կամ նրանք կարող են կապ հաստատել ձեզ հետ ձեր հարցազրույցից հետո՝ հեռախոսով կամ փոստով:

## Ո՞րն է ՀԴԲ-ի համար հանդիսանում գանգատը քննելու և/կամ հետաքննությունը նախաձեռնելու շեմը:

- ՀԴԲ-ն ի վիճակի է հետաքննել այն սպառնալիքները, որոնք խախտում են ԱՄՆ-ի դաշնային օրենքը և սպառնալիքի հասցեատիրոջ համար ենթադրում են վնաս կամ վտանգ:
- Սպառնալիքի հետ կապված մեղադրանքների համար անձանց հետապնդելու ԱՄՆ-ի կառավարության կարողությունը կախված է մի քանի գործոններից, ինչպիսիք են ապացույցների որակը, գողծողությունը հրահրող անձանց ինքնությունը բացահայտելու կարողությունը, դավադրության բացահայտումը և/կամ հանցագործ անձանց ձերբակալելու կարողությունը:

## Ի՞նչ կարող եմ ակնկալել այն դեպքում, երբ ՀԴԲ-ն սկսում է հետաքննությունը:

- Եթե ՀԴԲ-ի կարծիքով կատարվել է դաշնային բնույթի հանցագործություն, ապա մեկ կամ ավելի թվով ՀԴԲ-ի հատուկ գործակալներ իրականացնում են հետաքննություն: Հետաքննության շրջանակներում հատուկ գործակալները հավաքում են ապացույցներ, որի ընթացքում հնարավոր է, որ հարցազրույց վերցնեն ձեզանից և այլ զոհերից:
- Հնարավոր է, որ ձեզանից խնդրեն նկարագրել ձեր երբևէ ունեցած փորձառությունը Դաշնային դատարանի գերադաս երդվյալ ատենակալների առջև:
- Իրականացվելու է մանրակրկիտ հետաքննություն: Մինչև ավարտը, հետաքննությունը կարող է տևել բավականին երկար ժամանակ, և ընթացիկ զարգացումների մասին դուք չեք տեղեկացվելու ամեն օր: Ամեն ջանք կգործադրվի հետաքննության ընթացքում եղած կարևոր իրադարձությունների մասին ձեզ տեղեկացնելու համար, ինչպես օրինակ ձերբակալության կամ մեղադրական եզրակացության մասին: ՀԴԲ-ն պարտավորված է տրամադրելու ձեզ հնարավորինս ամբողջ տեղեկատվությունը նախքան այն հանրայնորեն հրապարակելը: Սակայն, ՀԴԲ-ն միշտ աչալրջորեն է մոտենում այն հարցին, որ չբացահայտվի որևէ զգայուն բնույթի տեղեկատվություն, որը կարող է վնասել հետաքննությանը կամ ազդել իրավապահ մարմինների համար վտանգավորության աստիճանի մեծացման վրա:
- ՀԴԲ-ի Զոհերի հարցերով մասնագետը հասանելի կլինի բացահայտված զոհերին աջակցություն, տեղեկատվություն և անհրաժեշտ բոլոր տեղական ռեսուրսներից օգտվելու հարցում ուղեգրում տրամադրելու համար:

***Նույնիսկ եթե ձեր հանդեպ կատարված սպառնալիքի կամ ահաբեկման մանրամասների մասին հաղորդումը չի ավարտվում հետաքննությամբ, այնուամենայնիվ դրանով Դուք կօգնեք ՀԴԲ-ին այլ զոհերի հանդեպ կատարված սպառնալիքները և անձնական ինքնության հետ կապված միտումները բացահայտելու հարցում:***

***ՀԴԲ-Ի ԴԱՇՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՆՇՎԱԾ ԵՆ ԸՍՏ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՆԱՀԱՆԳԻ, ՀԱՍԱՆԵԼԻ ԵՆ ԱՅՍՏԵՂ WWW.FBI.GOV. ԵԹԵ ԴՈՒՔ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ ԵՔ, ԱՊԱ ԶԱՆԳԱՀԱՐԵ՛Ք 911.***